



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՐԿԱՆԻ ՕԾՈՒՄ ԵՒ ԼԱՆՁԱԽԱԶԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Կլենտելյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 1 Յուլիսին, Ս. Պատարագի ընթացքին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի կատարէ եկեղեցւոյ մկրտութեան նոր աւազանին օծումը:

Նմանապէս, Առաջնորդ Սրբազանը եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Արտակ Քիւնյ. Տեմիրճեանի պիտի շնորհէ Հայրապետական Կոնդակ մը, տրուած՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ, ըստ որուն, Տէր Հայրը իրաւունք կը ստանայ կրելու քահանայական լանջախաչ:

PRELATE TO CONSECRATE NEW BAPTISMAL FONT AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE

On Sunday, July 1st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, during Holy Mass, will consecrate the new baptismal font at St. Mary's Church in Glendale. The Prelate will also present Rev. Ardag Demirjian, Pastor of St. Mary's, with a Pontifical Encyclical by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, bestowing him with the privilege of wearing a pectoral cross.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ Կ'ԱՅՑԵԼԵՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը Հինգշաբթի, 28 Յունիսի յետմիջօրէին, Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեանի ընկերակցութեամբ Սան Ֆրանսիսքօ ժամանեց, խորհրդակցական հանդիպումներ ունենալու համար Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ժողովականութեան ներկայացուցիչներուն հետ:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ատենապետը հանդիպումներ ունեցան եկեղեցւոյ հոգեւոր Հովիւին, Հոգաբարձութեան եւ Ազգային Երեսփոխաններու հետ: Հանդիպումները ընդգրկեցին նաեւ Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական վարժարանի տնօրէնը՝ Տիար Եփրեմ Միհրանեանը: Խորհրդակցութեանց իր մասնակցութիւնը բերաւ Ազգային Վարչութեան անդամներէն Տիար Կարպիս Պեզճեան:

Քննարկուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքի աշխատանքներն ու ծրագիրները, ինչպէս նաեւ Ազգային վարժարանին գործունեութեան դաշտերը:

PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF ST. GREGORY CHURCH IN SAN FRANCISCO

On the afternoon of Thursday, June 28, the Prelate departed for San Francisco, accompanied by Executive Council Chairman Dr. Garo Agopian, to meet with the Pastor, Board of Trustees, and Delegates of St. Gregory Church. During the visit they also met with the principal of Krouzian-Zekarian-Vasbouragan School Mr. Yeprem Mehranian. Executive Council member Mr. Garbis Bezdjian participated in the meetings.

Items on the agenda included the various endeavors of the parish and future activities as well as issues relating to the school.

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ՝ ՏՈՔԹ ՄԻՍԱԿ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ

Չորեքշաբթի, 27 Յունիսի առաւօտուն, մեր ժողովուրդը կորսնցուց իր բազմավաստակ եւ արժանաւոր գաւակներէն Տոքթ. Միսակ Արզումանեանը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զայրը, Կրօնական Ժողովը, Ազգային Վարչութիւնը, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքը եւ յարակից մարմիններ պաշտօնական հաղորդագրութեամբ մը գումեցին նուիրեալ հայորդիին մահը:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 30 Յունիսի կէսօրին, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Պիտի կատարուի Ազգային Թաղում:

Տոքթ. Մ. Արզումանեան աւելի քան 40 տարիներու վաստակ ունի մեր ազգային կեանքին, Զ.Մ.Ը.Մ.ի ու այլ միութեանց մէջ:

Առաջնորդ Սրբազանը, որ Սան Ֆրանսիսքո կը գտնուի, պիտի նախագահէ արարողութիւնը եւ արտասանէ դամբանական խօսք մը: Ան նաեւ յանուն Վեհափառ Զայրապետին ու մեր Թեմի ժողովականութեան, ցաւակցութիւն պիտի յայտնէ հանգուցեալի հարազատներուն եւ միութենական ընկերներուն:

PRELATE TO PRESIDE OVER NATIONAL FUNERAL SERVICE FOR DR. MISAK ARZUMANIAN

On the morning of Wednesday, June 27, the Armenian community lost one of its prominent members, Dr. Misak Arzoumanian. On this sad occasion the Prelate expressed his condolences to the members of St. Gregory Church and affiliated organizations on behalf of the Prelacy Religious and Executive councils.

The national funeral service will take place on the morning of Saturday, June 30, at St. Gregory church. The Prelate will preside over the funeral service and deliver the eulogy. He is also to convey the condolences of H.H. Aram I to the family and friends of Dr. Arzoumanian.

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱԻԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԴԻՎԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Ազգային Վարչութեան դիւանը, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, Երեքշաբթի, 26 Յունիսի երեկոյեան ընդունեց այցելութիւնը Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան վարչութեան դիւանին:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանին մէջ եւ առիթ ծառայեց Հաստատութեան աշխատանքներուն ծանօթացման:

Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան ներկայացուցիչները յայտնեցին, թէ 20 տարի առաջ սահմանափակ պայմաններու մէջ սկսած իրենց աշխատանքը այսօր զգալիօրէն ծաւալած է. հաստատութիւնը հայերէն լեզուի, մշակոյթի ու մարզախաղերու դասընթացքներ կը կիրարկէ պետական վարժարաններ յաճախող հայ աշակերտներու համար, որոնք այլապէս հեռու պիտի մնային հայկականութենէ:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան ներկայացուցիչները գնահատանքով արտայայտուեցան հաստատութեան նուիրեալ աշխատողներուն մասին եւ վերահաստատեցին Ազգ. Առաջնորդարանի զօրակցութիւնը:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL REPRESENTATIVES MEET WITH DAVIDIAN-MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION MEMBERS

On the evening of Tuesday, June 26, the Prelate and Executive Council representatives welcomed to the Prelacy members of Davidian-Mariamian Educational Foundation.

Members of the Foundation reported to the Prelate that their work which began twenty years ago has increased significantly and their mission to provide Armenian language and culture instruction to Armenian students attending public schools continues strong. The Prelate and Executive Council members commended the Foundation for their dedicated work and reaffirmed the Prelacy's support of their endeavors.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՇԱՐԱԹԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆՑ ԵԶՐԱՓՈՎԿՈՒՄ

Երեքշաբթի, 26 Յունիսի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, կատարուեցաւ Երեքշաբթի երեկոյեան հոգեւոր խորհրդածութիւններու տարեշրջանին եզրափակումը:

Ամբողջ տարեշրջանին, աւելի քան 300 անձեր մասնակցեցան սերտողութեանց, ուսումնասիրելով Մատթեոսի Աւետարանը: Երեկոները վարեց Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Առաջնորդ Սրբազանը, որ անձամբ ներկայ էր եզրափակիչ հանդիպումին, բարձր գնահատեց Հայր Պարթեւը, Եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, Հոգաբարձական կազմը եւ սերտողութեան մասնակիցները:

Սերտողութեան աւարտին, բոլոր ներկաները ծնրադիր երգեցին «Տէ՛ր, ողորմեա՛» եւ Տէրունական Աղօթքը, ապա Սրբազան Հօր սրտաբուխ աղօթքով եւ «Պահպանի՛չ»ով արձակուեցան խաղաղութեամբ:

CONCLUSION OF BIBLE STUDY AT ST. MARY'S CHURCH

On the evening of Tuesday, June 26, the last Bible study of this season of St. Mary's Church in Glendale took place prior to the commencement of summer break. The sessions, which are led by Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, have been taking place every Tuesday since the start of the year with over 300 faithful in attendance each week.

The Prelate attended this year's concluding session during which he commended Father Barthev, parish pastors, Board of Trustees, and the participants.

The session concluded with a group prayer and the benediction by the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅԵՐԿՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԵԶՐԱՓՈՎԿՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.ը յառաջիկայ Յուն 7 Յուլիսին, պիտի ունենայ իր տարեկան մարզախաղերուն ու ՅԵՐԿՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ յաղթական աւարտը նշող տողանցքը, Birmingham High School-ի համալիրին մէջ, ինչպէս նաեւ յաղթանակի պարահանդէսը:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ յաղթանակի պարահանդէսին, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 6 Յուլիսի երեկոյեան, Sheraton Universal պանդոկի սրահին մէջ, իսկ Շաբաթ, 7 Յուլիսին, ներկայ պիտի ըլլայ Նաւասարդեան Խաղերու լրումը նշող մարզահանդէսին ու տողանցքին:

Յայտնենք, որ ինչպես անցեալ տարիներուն, այս տարի եւս, մեր Թեմի Երիտասարդական Միութիւնը մարզախաղերու օրերուն Birmingham High School-ի շրջափակին մէջ պիտի ունենայ յատուկ տաղաւար մը:

PRELATE TO PARTICIPATE IN CLOSING CEREMONIES OF NAVASARTIAN GAMES

From Tuesday, July 3rd, to Saturday, July 7th, the 32nd annual Navasartian games will take place at Birmingham High School.

The Prelate will attend the Victory Ball on the evening of Friday, July 6, at Sheraton Universal Hotel, as well as the closing ceremony and parade on Saturday, July 7th.

As in previous years, the Prelacy Armenian Church Youth Association (ACYA) will have a booth at the games.